ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 11. Արբիտրների նշանակումը

1. Կողմերն ազատ են արբիտրաժային համաձայնությամբ սահմանելու արբիտրին ներկայացվող ցանկացած պահանջ: Ոչ ոք չի կարող իր քաղաքացիության պատճառով զրկվել արբիտր նշանակվելու իրավունքից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: Արբիտր կարող է լինել 25 տարին լրացած, բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող յուրաքանչյուր գործունակ ֆիզիկական անձ: Արբիտր չի կարող լինել դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված, հանցագործություն կատարելու համար դատապարտված անձը, ինչպես նաև այն անձը, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում: